

«ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ»ՈՒՆ ՇՈՒՐՋ

(Բանախօսություն SOԲԹ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ)

Յարգելի ունկնդիրներ,

Այստեղ արտայայտուած այն *տեսական* ըմբռնումը թե՛ բանաստեղծի մը, հեղինակ մը կամ գրուածք մը կարելի չէ դատել, դժբախտաբար չեմ կրնար բաժնել: Ճիշտ է որ հեղինակի մը երկը կամ բանաստեղծի մը քերթուածը անոր *անհատական* զգացումներու եւ դատողութիւններու արտայայտութիւնն է, սակայն այդ չի նշանակեր որ այդ արտայայտութիւնը ուրիշներու համար անձեռնմխելի պիտի նկատուի, քանի որ իր հրապարակային արտայայտութեամբ իսկ կը դադրի զուտ անհատական բան մը ըլլալէ եւ կը դառնայ *հասարակութեան* սեփականութիւն: Ահա այս ըմբռնումով է որ ես կը մօտենամ Դանիէլ Վարուժանի *Հեթանոս երգերուն* թերի կողմերը վեր հանելու:

Թիւրիմացութիւնները մէկ անգամէն կանխելու համար անհրաժեշտ կը համարեմ այստեղ շեշտել թե՛ Վարուժան իմ կարծիքով բանաստեղծ է եւ ան ալ տաղանդաւոր բանաստեղծ, որովհետեւ ան ունի այն բոլոր հիմնական յատկութիւնները, որ կը պահանջուին քերթողէ մը – վառ երեւակայութիւն, պատկերներ յօրինելու եւ արտայայտելու կարողութիւն, բանաստեղծական թոփչք, նիւթեր ընտրելու եւ մշակելու ընդունակութիւն, զգացումի ենթակայութիւն, գեղարուեստական ճաշակ, եւայլն: Սակայն այս ամէնով հանդերձ Վարուժան ունի իր թերի կողմերը եւ արդէն ուրիշ կերպ ալ չէր կրնար ըլլալ: Ջանալ ապացուցանել կամ առնուազն լռելեայն ընդունիլ որ *Հեթանոս երգերը* ամէն տեսակէտով քննադատութիւնէ վեր ժողովածու մըն է, կը նշանակէ Վարուժանի հասցէին ուղղել ամենամեծ անարգանքը. այդ կը նշանակէ ընդունիլ թե՛ Վարուժան հասած է կատարելութեան վերջին աստիճանին, այլեւս առաջ երթալու տեղ չունի, հետեւաբար ստիպուած է քարացած